



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Թիւ 27580
Նոյեմբեր 24, 1981

Հոգեշնորհ
Տ. Արշէն Կրդ. Այվազեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Չէլթընհամ.

Սիրելի Հայր Արշէն,

Այսու գիրով կը յայտնենք թէ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք Նոր պատգամաւորներուն եւ անոնց անձնափոխանորդներուն համար, Թեմական Կանոնադրութեան 14-Գ եւ 54 յօդուածներուն համաձայն, եւ 1980 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրատու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ձեր նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը Փետրուար ամսուան սկիզբը, որպէս զի կարելի ըլլայ հրաւիրել զիրենք Թեմական Պատգամաւորական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 6-8, 1982, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ նիւ Պրիթըն Գընէթիքէթի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր պատգամաւորներուն ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, ծխական Խորհուրդի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներփակենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ
Առաջնորդ

Թուական

Այսու գիրով կը հաստատենք որ Տիար կամ Տիկին -----
հաւատաւոր անդամ է մեր Եկեղեցւոյ եւ ----- 1982ին
գումարուած Տարեկան Անդամական Ժողովի ընթացքին ընտրուած է թեմական
պատգամաւոր:

Ժխական Խորհուրդի
Ատենադպիր

Ժխական Խորհուրդի
Ատենապետ

Հոգեւոր Հովիւ

Date

This is to certify that _____ is a member in good
standing of the _____ Armenian Church; and
was duly elected a Diocesan Delegate by the General Assembly on
_____.

Parish Council Secretary

Parish Council Chairman

Parish Priest